# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԾԴ-397
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «12» 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին)՝ ի դեմս նախարարության կանոնադրության հիման վրա գործող գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի, մի կողմից, և «Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս կազմակերպության կանոնադրության հիման վրա գործող ռեկտոր Ս. Գևորգյանի, մյուս կողմից, (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

## I. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պետական մարմինը հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Պետական մարմնի կողմից հատկացված միջոցներն ուղղել Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների անցկացման ծախսերի փոխհատուցմանը՝ համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 14-ի N2354-Ա/2 հրամանով հաստատված ծրագրի և պայմանագրի անբաժանելի մաս կազմող հաշվարկի (Հավելված):

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***2.1. Պետական մարմինը պարտավոր է՝***

2.1.1. Հատկացնել գումարը «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի «1168. Արվեստների ծրագրի» «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը նախատեսված անհատույց դրամաշնորհների հաշվին,

2.1.2. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում ընդունել Կատարողի կողմից Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով սահմանված կարգով ներկայացված հաշվետվությունները, ստորագրել հանձնման-ընդունման արձանագրությունը:

***2.2. Պետական մարմինն իրավունք ունի՝***

2.2.1. Ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ստուգե Կատարողի կողմից Պայմանագրի կատարման ընթացքը՝ չմիջամտելով վերջինի գործունեությանը,

2.2.2. Կատարողի կողմից Պայմանագրի 2.3-րդ կետով նախատեսված պարտավորություններ չկատարելու դեպքում հետ պահանջել փոխանցված գումարը, միակողմանի լուծ Պայմանագիրը՝ դադարեցնելով պայմանագրով իր վրա դրված պարտավորություններ կատարումը,

2.2.3. Կատարողից պահանջել առանց լրացուցիչ վճարի վերստին կատարել ոչ պատշաճ ձև կամ կարգով կատարված աշխատանքները,

2.2.4. Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետում Կատարողից պահան ներկայացնել Պայմանագրի 2.3.2-րդ ենթակետով նախատեսված հաշվետվությունը:

***2.3. Կատարողը պարտավոր է՝***

2.3.1. Պայմանագրից բխող աշխատանքներն իրականացնել՝ ապահովելով Պայմանա պարտադիր պահանջները,

2.3.2. Սույն Պայմանագրի 6.1-ին կետով սահմանված ժամկետներում Պետական մարմ ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսեր իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը պարունակո

տական մարմնի կողմից հաստատված ձևանմուշով լրացված ձևը՝ նկատի ունենալով, որ աստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կատարողի մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառման իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.3.3. Հրապարակել Պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին:

**2.4. *Կատարողն իրավունք ունի՝***

2.4.1. Պետական մարմնի կողմից Պայմանագրի 2.1.1-ին ենթակետով նախատեսված պարտավորությունները չկատարելու դեպքում միակողմանի լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով Պայմանագրով իր վրա դրված պարտավորությունների կատարումը,

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված աշխատանքների իրականացման համար Պետական մարմինը Կատարողին հատկացնում է 34468,2 հազար ( երեսունչորս միլիոն չորս հարյուր վաթսունութ հազար երկու հարյուր) դրամ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելվածի,

3.2. Պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է Պայմանագրի կնքումից հետո՝ Կատարողի հաշվեհամարին փոխանցելու միջոցով,

3.3. Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի հաշվարկված **ԱԱՀ-ի** գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված աշխատանքները Կատարողի կողմից ներկայացվում են Պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան Պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է ընդունման-հանձնման արձանագրություն:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5.1. Պայմանագրով նախատեսված պարտավորությունները կողմերը պարտավոր են կատարել պատշաճ և սահմանված ժամկետներում: Դրանք ոչ պատշաճ կամ ժամկետանց կատարելու, չկատարելու կամ կատարելուց խուսափելու դեպքում, ինչպես նաև իրենց գործողություններով կամ անգործությամբ Պայմանագրի կատարման համար խոչընդոտներ ստեղծելու, մյուս կողմին վնաս պատճառելու համար կողմերից յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մյուս կողմին պատճառած վնասների լրիվ ծավալով՝օրենքով սահմանված կարգով,

5.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ՝ մյուս կողմի՝ Պայմանագրի պայմանները խախտելու դեպքում: Այդ ժամանակ նախաձեռնող կողմը պետք է ստանա վնասների լրիվ չափով փոխհատուցում,

5.3. Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելը կամ լուծելը Կողմերից որևէ մեկի համար այն կատարել շարունակելն աննպատակահարմար լինելու դեպքում կամ այլ պատճառաբանությամբ չի թույլատրվում: Նման դեպքում Կողմն իրավունք ունի կամ ստանալ

պայմանագրի 3.1-ին կետով նախատեսված գումարի լրիվ փոխհատուցումը, կամ պահանջել Պայմանագրի հարկադիր կատարումը,

5.4. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները Կատարողի կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում՝ ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը Կատարողին չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից,

5.5. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կատարողը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, սույն կետով սահմանված տույժերը վերաբերում են Պետական մարմնին ներկայացվող ինչպես ֆինանսական, այնպես էլ՝ բովանդակային հաշվետվություններից յուրաքանչյուրին,

5.6. Պետական մարմինը կարող է սույն կետով նախատեսված տույժերն ու տուգանքները հաշվարկել և հաշվանցել Կատարողին վճարվելիք գումարներից:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1. Պայմանագրով նախատեսված աշխատանքների հաշվետվությունների ներկայացման ժամկետը մինչև 2022 թվականի դեկտեմբերի 30-ն է:

6.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը:

## 7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրը կազմված է 7 թերթից, կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

8.2. Սույն պայմանագրում լրացումներ ու փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնությունները կազմվում են գրավոր և հաստատվում են Կողմերի ստորագրությամբ:

## 9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Երևան, Վ. Սարգսյան 3

Կառավարական տուն N 2

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ 900011032878, հվհհ 02698732

Գլխավոր քարտուղար՝

________________Գ. Սաֆարյան

(ստորագրություն)

Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

ք. Երևան, Տիգրան Մեծի 17

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510002308480100 հվհհ 02527624

Հեռ.՝ 091552152

Ռեկտոր՝

________________Ս. Գևորգյան

ստորագրություն

Կ.Տ.

ՀԱՎԵԼՎԱԾ
15 12 2022 թ.
ՊՊՄ N397 պայմանագրի

## ՀԱՇՎԱՐԿ

Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների անցկացման ծախսերի փոխհատուցման

| 1. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգ | | | | |
|---|---|---|---|---|
| **Ծախսատեսակի անվանումը** | **Միավոր** | **Քանակ** | **Միավորի արժեքը (դրամ)** | **Գումարը (հազար դրամ)** |
| 1.1.Վարձատրություն *(ներառյալ հարկերը)* | | | | **9 330,0** |
| Հայաստանի երգի պետական թատրոնի երգիչներ | մարդ | 6 | 50 000 | 300,0 |
| Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ | ծառայություն | 1 | 1 200 000 | 1 200,0 |
| Երևանի մնջախաղի պետական թատրոն | մարդ | 3 | 93 333 | 280,0 |
| Սցենարիստ | մարդ | 1 | 600 000 | 600,0 |
| Բեմադրող | մարդ | 1 | 1 000 000 | 1 000,0 |
| Խորեոգրաֆ | մարդ | 1 | 1 000 000 | 1 000,0 |
| Օպերայի նվագախումբ | ծառայություն | 1 | 2 300 000 | 2 300,0 |
| Օպերայի մենակատար | մարդ | 1 | 150 000 | 150,0 |
| Աշխատանքային խումբ | մարդ | 9 | 200 000 | 1 800,0 |
| Ձայնագրություն | մարդ | 1 | 200 000 | 200,0 |
| Սիմֆոնիկ նվագախումբ | ծառայություն | 1 | 500 000 | 500,0 |
| **1.2. Կրթամշակութային կամ թատերահամերգային միջոցառում իրականացնելու համար ծառայությունների մատուցում**<br>- Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճ, նոյեմբերի 6-ին ժամը 19:00-ին համերգ՝ 1 օր, 1605,0 հ. դ.<br>- Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճ, նոյեմբերի 5-ին ժամը 12:00-14:30 նախապատրաստական աշխատանքներ՝ 1 օր, 400,0 հ. դ.<br>- նոյեմբերի 6-ին համերգի ժամանակ հիմնական բեմի կողքի երկու բեմի օգտագործում՝ 1 օր, 700,0 հ. դ.<br>- բալետային լինոլեումով բեմը ծածկելու ծառայություն՝ 1 օր, 100,0 հ. դ. | ծառայություն | 1 | 2 805 000 | **2 805,0** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **1.3. Միջոցառումների տեխնիկական ապահովման ծառայություն**<br>2022 թվականի նոյեմբերի 6-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի դահլիճում՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 100-ամյակին նվիրված գալա համերգի (միջոցառման) տեխնիկական ապահովման ծառայություն:<br>Ներառում է.<br>1. LED էկրան 30քմ P3 տեղադրում, մոնտաժում, սպասարկում,<br>2. Մետաղական կոնստրուկցիաների տեղադրում 50 գծմ,<br>3. Անհրաժեշտ մալուխների մոնտաժում,<br>4. Ձայնային համակարգի տեղադրում և սպասարկում մոնիտորներով 20Կվտ,<br>Ա) Հեռակառավարվող համակարգ /պուլտ/ Yamaha LS9/32,<br>Բ) Միկրոֆոններ SM 57- 10 – 12 հատ տեղադրում, սպասարկում,<br>Գ) Հեռակառավարվող միկրոֆոններ SHURE SM 58 BETA տեղադրում, սպասարկում,<br>Դ) Ետատիվներ, տեղադրում,<br>Ե) Միկրոֆոններ երաժշտական գործիքների համար, տեղադրում,<br>5. թափանցիկ ամբիոնի տեղադրում,<br>6. դեկորատիվ լույսերի տեղադրում և սպասարկում LED Par wash strip,<br>7. ձայնային բարձրախոսներ JBL rcf տեղադրում, սպասարկում,<br>Տեխնիկական միջոցների տրամադրումը, տեղադրումը, սպասարկումը և տեղափոխումը մատակարարի կողմից: | ծառայություն | 1 | 2 150 000 | **2 150,0** |
| **1.4.Գովազդային և տպագրական ծախսեր** | | | | **1 030,0** |
| Օպերային թատրոնի դահլիճում 100-ամյակին բաների տպագրություն (3-6 մետր) | հատ | 1 | 46 000 | 46,0 |
| Պատվոգրեր | հատ | 500 | 480 | 240,0 |
| Շնորհակալագրեր | հատ | 500 | 480 | 240,0 |
| Հրավիրատոմսեր | հատ | 1050 | 480 | 504,0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **15 315,0** |

**2. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված պարի թանգարանի բացում**

| Ծախսատեսակի անվանումը | Միավոր | Քանակ | Միավորի արժեքը (դրամ) | Գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 2.1. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի թանգարանում՝ թվով 1 պաստառի չափագրում, դիզայն, տպագրում և մեծադրում (1 հատը՝ 1,5 - 2 մետր չափսի, 3քմ) | հատ | 1 | 100 000 | 100,0 |
| 2.2. «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի թանգարանում՝ թվով 1 պաստառների չափագրում, դիզայն, տպագրում և տեղադրում: (1 հատը՝ 1,80 - 4 մետր չափսի, 7,2 քմ) | հատ | 1 | 240 000 | 240,0 |
| 2.3. Նամականիշներ և նամականիշների հավաքածու 100-ամյակին նվիրված | հատ | 1510 | 626 | 945,0 |
| 2.4. ՀՊՄՀ-ում պարի թանգարանի համար թվով 3 հարթաքանդակների պատրաստում և տեղադրում | հատ | 3 | 256 666 | 770,0 |
| 2.5. ՀՊՄՀ-ի պարի թանգարանում Ուրարտական շրջանի պարարվեստին վերաբերվող նյութերի տպագրություն ապակու վրա | քմ | 7 | 80 000 | 560,0 |
| 2.6. ՀՊՄՀ-ի պարի թանգարանի համար բուտաֆոր գրքերի պատրաստում | հատ | 5 | 40 000 | 200,0 |
| 2.7. ՀՊՄՀ-ի պարի թանգարանի համար ցուցանմուշներում նախատեսված երկու թեք պատվանդաններ, հոդեհի համար նախատեսված գործիքների պահարանը փակող դուռ | հատ | 1 | 80 000 | 80,0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 3 045,0 |

**3. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված գիտաժողովներ, պաշտոնական ընդունելություններ**

| Ծախսատեսակի անվանումը | Միավոր | Քանակ | Միավորի արժեքը (դրամ) | Գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 3.1. Ցյուրիխի համալսարանի և Արտաս հիմնադրամի համագործակցության շրջանակներում վերապատրաստվողների համար հյուրասիրության կազմակերպում (տևողությունը՝ 2 օր, 50 անձի համար, 2 հատ սուրճի ընդմիջում, 1 հատ ճաշի ընդմիջում) | ծառայություն | 1 | 540 000 | 540,0 |
| 3.2. Իսպանիայի Լա Կորունայի համալսարանի հետ համատեղ կազմակերպված «Եվրոպան և Արևելյան երկրները» խորագրով միջազգային գիտաժողովի մասնակիցների համար ֆուրշետի կազմակերպում (տևողությունը՝ 2 օր, 50 անձի համար, 2 հատ սուրճի ընդմիջում, 1 հատ ճաշի ընդմիջում) | ծառայություն | 1 | 540 000 | 540,0 |
| 3.3. «Պատերազմի սոցիալ հոգեբանական հետևանքները» միջազգային գիտաժողովի համար ֆուրշետի կազմակերպում (տևողությունը՝ 2 օր, 50 անձի համար, 2 հատ սուրճի ընդմիջում, 1 հատ ճաշի ընդմիջում) | ծառայություն | 1 | 540 000 | 540,0 |
| 3.4. «Պատերազմի սոցիալ հոգեբանական հետևանքները» միջազգային գիտաժողովի համար բանների տպագրություն | հատ | 1 | 30 000 | 30,0 |
| 3.5. ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված տարեվերջյան գիտաժողովի համար ֆուրշետի կազմակերպում (տևողությունը՝ 2 օր, 50 անձի համար, 2 հատ սուրճի ընդմիջում, 1 հատ ճաշի ընդմիջում) | ծառայություն | 1 | 550 000 | 550,0 |
| 3.6. Նոյեմբերի 6-ին պաշտոնական ընթրիք օտարերկրացի հյուրերի և պետական պաշտոնյաների համար, 25 անձի համար | ծառայություն | 1 | 312 500 | 312,5 |
| 3.7.Նոյեմբերի 7-ին «Օջախ» ռեստորանային համալիրում կայացած բանկետ, պաշտոնական ընթրիք 100-ամյակին նվիրված, 300 անձի համար | ծառայություն | 1 | 3 750 000 | 3 750,0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | 6 262,5 |

**4. Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հիմնադրման 100-ամյակին նվիրված նվերներ, հուշանվերներ, մեդալներ և այլն**

| Ծախսատեսակի անվանումը | Միավոր | Քանակ | Միավորի արժեքը (դրամ) | Գումարը (հազար դրամ) |
|---|---|---|---|---|
| 4.1. Կրծքանշաններ 1 | հատ | 300 | 1 400 | 420,0 |
| 4.2. Կրծքանշաններ 2 | հատ | 420 | 1 350 | 567,0 |
| 4.3.Թղթապանակներ լամինացված և կաշվենման | հատ | 150 | 1 930 | 289,5 |
| 4.4.Գրիչների վրա ՀՊՄՀ լոգոյի տպագրություն | հատ | 200 | 350 | 70,0 |
| 4.5. Բրիլոկների վրա ՀՊՄՀ լոգոի տպագրություն | հատ | 200 | 650 | 130,0 |
| 4.6. Բլոկնոտներ կաշվենման ՀՊՄՀ գերբով տպագրություն | հատ | 100 | 3 700 | 370,0 |
| 4.7. Բաժակներ ՀՊՄՀ լոգոյով տպագրված | հատ | 100 | 1 800 | 180,0 |
| 4.8. Ժապավեն ՀՊՄՀ լոգոյով տպագրված | մետր | 300 | 230 | 69,0 |
| 4.9. Շարֆ ՀՊՄՀ լոգոյով տպագրված | հատ | 50 | 10 000 | 500,0 |
| 4.10. Մեդալներ Խ. Աբովյան | հատ | 25 | 8 000 | 200,0 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.11. Մեդալներ Մանկավարժական Համալսարան | հատ | 80 | 7 500 | 600,0 |
| 4.12. Մեդալների տուփեր | հատ | 55 | 3 500 | 192,5 |
| 4.13. Թղթյա տոպրակներ նվերների համար | հատ | 200 | 1 200 | 240,0 |
| 4.14. Հուշանվերներ | հատ | 30 | 600 | 18,0 |
| 4.15. Մեդալների վկայականներ Խ. Աբովյան | հատ | 35 | 1 500 | 52,5 |
| 4.16. Մեդալների վկայականներ մանկավարժական | հատ | 135 | 1 500 | 202,5 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | | | **4 101,0** |
| **ԱՄԲՈՂՋԸ** | | | | **28 723,5** |
| **ԱԱՀ*** | | | | **5 744,7** |
| **ԱՄԲՈՂՋԸ (ներառյալ ԱԱՀ)** | | | | **34 468,2** |

*** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

**ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝**

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_______________ Գ. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ. Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

«Խաչատուր Աբովյանի անվան պետական
մանկավարժական համալսարան» հիմնադրամ
ք. Երևան, Տիգրան Մեծի 17
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510002308480100 հվհհ 02527624
Հեռ.՝ 091552152
Ռեկտոր՝
_______________ Ս. Գևորգյան
(ստորագրություն)